և ամենայն իմաստութեամբ զարդարեալ. զորոյ քաջութիւն նորա գրեալ կայ այսմ թղթին մէջ. զոր եթէ կամիք զնորա զքաջայաղթութիւն ընթեռնլով իմանալ, եթէ որչափ հնարս և քաջութիւն արարեալ է այսմ աշխարհիս՝ որ կոչի Իլեախաց երկիր, զամենայն ինչ գրով թողեր եմք ի մէջ այս գրքիս. եթէ ի Մոսքով եթէ ի Ցոցորան, եթէ ի Պչին, որ զկայսրն Մաքսիմիլեան որպէս ձերբակալ արար և էած առ թագաւորն, նոյնպէս և զիշխանս մեծամեծս, երկաթի կապանօք էած առ ոտս թագաւորին, և զամենայն զօրս և զհեծեալս մինչ ի սպառ կոտորեց, ամենակալին Աստուծոյ կարողութեամբ. զոր նմա փառք և գոհութիւն, որ տայ քաջութիւն և յաղթութիւն իւր հաւատարիմ ծառայից. նոյնպէս և զԴադար, որք են Իսմայելացիք, և զնոսա կոտորէր հանապազ և յաղթահարէր և հալածէր, Աստուծոյ կարողութեամբ. զոր նմա փառք և գոհութիւն ի յամենայնի, յաւիտեանս ամէն։ Եւ եթող ժառանգ զորդին իւր զԹոմաս անուն, տղայ գոլով, բայց ունի Աստուծոյ շնորհօք զհայրական իւրոյ նմանութիւն ի յամենայնի. զոր և Տէր Աստուած պահեսցէ զնա յամենայն փորձանաց երեւելի և յաներեւոյթ թշնամոյն. ամէն, ամէն, և եղիցի։ Եւ էր ինքն ողորմած հոգին քանցլէր իբրեւ ամաց եօթանասնից յորժամ վաղճանեցաւն։

1606. Թվ. ՌԾԴ. Դեկտեմբերի ամսոյ. Եղեւ շարժ ի Կամենիցս և շուրջ զգաւառաւ, մինչ զի ի Մահարքն գեղան՝ երկիր վայր անցաւ, վասն մեղաց մերոց. Աստուած վերջն բարի առնէ, ի մեղաց թողութիւն պարգեւէ, և զմեզ փրկէ այնպիսի պատուհասէ։

1605–6. Թվ. ՌԾԴ. Թագաւորն Զիկմունդ երկուսում կին էառ զերկու քոյրսն (քոյս), զմին քոյրսն արել էր և մեռաւ, այժմ զմիւս քոյրսն յէառ թողութեամբ Բարիժի (Պապին) [1]։

1605–6. Թվ. ՌԾԴ. — Դադարն եկաւ այս յաշխարհս ի միւսմ ամին եօթն անկամ. այս եղեւ յետ վաղճանելոյն քանցլէրին. և շատ գերի առաւ զմեծամեծս իշխանսն, կանամբ և զաւակօք։

1605–6. Թվ. ՌԾԴ. — Ոմն Տիմիդր յայտնեցաւ տղայ գոլով ի Մոսքովի երկիր, և էր ինքն Մոսքովի ցարին որդին քնեազ Իվանին, և յորժամ մեռաւ քնեազ Իվան հայրն Տիմիդրէին, մնաց Տիմիդրէն ի հօրէն որբ, մանուկ գոլով. յետոյ աշխարհն Մոսքովին մնաց անթագաւոր. յետոյ տարակուսեցան և ընտրեցին իշխանացն զոմն Պորիս Կատոնովիչ՝ իւրեանց թագաւոր. և յորժամ նստաւ թագաւոր, կամէր սպանանել զՏիմիդրն, զի ինքն թագաւորեսցէ առանց հակառակութեան, և մեծամեծ իշխանք փախուցին ի վանքն՝ ուր 700 աբեղայ կային, և անտի կամեցաւ հանել ի վանաց և սպանանել. իբրեւ իմացան աբեղայքն զչար խորհուրդն Պորիսին, վաղվաղակի փախուցին

1. Այլուր գրէ, թագաւորն Զիկմունդ երկուսում կին էառ զնամաչունչ քոյրքն՝ զերկուքն։